ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 84/7

29-ը նոյեմբերի 2025 թվականի

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գրադարանից օգտվելու կանոնները հաստատելու մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գրադարանից օգտվելու կանոնները համաձայն հավելվածի,
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի

2025թ. նոյեմբերի 29-ի նիստի թիվ 84/7 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ _____ Մ. Մ. Օթարյան

ԿԱՆՈՆՆԵՐ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՐԱԴԱՐԱՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոններում սահմանվում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) գրադարանի ռեսուրսներից օգտվելու պայմանները, ընթերցողների իրավունքներն ու պարտականությունները: Այս կանոններով են կարգավորվում նաև օգտվողների սպասարկմանը վերաբերող գրադարանի իրավունքներն ու պարտականությունները:

1.2. Կանոնները մշակված են ԵՊՀ ԻՄ և գրադարանի կանոնադրության, ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական կանոնների, ինչպես նաև այլ իրավական փաստաթղթերի հիման վրա:

2. Գրադարանից օգտվողների գրացման կարգը

2.1. Գրադարանից օգտվողների գրանցումը և գրադարանային քարտի տրամադրումը պարտադիր է:

2.2. Գրադարանից օգտվողների գրանցումն իրականացվում է գրադարանի սպասարկման պատասխանատուների կողմից:

2.3. Օգտվողների կարգավիճակի ստուգումն իրակացվում է համապատասխան հրամանների միջոցով: Նախքան գրանցվելը օգտվողները պարտավոր են ծանոթանալ սույն Կանոններին, ինչը կարող են իրակացնել ինչպես գրադարանում, այնպես էլ Մասնաճյուղի և գրադարանի կայքերի համապատասխան բաժնում:

2.4. Գրադարանում գրանցվելիս ստորագրում են՝ հաստատելով, որ ծանոթացել են Կանոններին և պարտավորվում են պահպանել դրանք:

2.5. Առանց գրադարանային քարտի գրադարանում սպասարկում չի իրակացվում:

2.6. Գրադարանային քարտը տրվում է հետևյալ ժամկետներով՝

1) մասնաճյուղի աշխատակիցներին՝ կախված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետից,
2) բակալավրիատի առկա ուսուցման ուսանողներին՝ չորս, իսկ հեռակա ուսուցման ուսանողներին՝ հինգ տարի,
3) մագիստարատուրայի ուսանողների համար՝ մինչև երկու տարի։

2.7. Գրադարանի օգտվողների ազգանվան, հասցեի կամ բջջային հեռախոսահամարի փոփոխման դեպքում նրանք այդ մասին պարտավոր են տեղեկացնել գրադարանի աշխատակիցներին։

3. Օգտվողները, նրանց իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը

3.1. Գրադարանից օգտվողները Մասնաճյուղի ներքին շահակիցներն են (աշխատողներ, ուսանողներ և այլն)։

3.2. Գրադարանից օգտվողներն իրավունք ունեն.

1) օգտվել գրադարանի կողմից մատուցվող գրադարանային-համակարգչային ծառայություններից,
2) ստանալ ամբողջական տեղեկատվություն որոնողական համակարգի, կայքի և տեղեկատվական այլ աղբյուրների միջոցով գրադարանի համաքաղաքների և գրքային պաշարների մասին,
3) սպասարկման պատասխատուներից (գրադարանավարներից) ստանալ գրադարանի գրքային հավաքաղաքներից տրման ենթակա ցանկացած միավոր՝ ժամանակավոր օգտագործման համար,
4) երկարացնել վերցված գրքային միավորների օտագործման ժամկետն ըստ սահմանված կարգի,
5) ստանալ խորհրդատվություն գրադարանային միջոցների և տեղեկատվական աղբյուրների ընտրության ու որոնման հարցում,
6) մասնակցել գրադարանի կողմից կազմակերպվող մշակութային և գիտական միջոցառումներին,
7) ներկայացնել առաջարկություններ և դիտողություններ գրադարանի աշխատանքային գործունեության բարելավման վերաբերյալ,

8) օգտվել գրադարանի գույքից և տարածքից։

3.3. Գրադարանից օգտվողները պարտավոր են.

1) պահպանել սույն կանոնները,

2) խնամքով վերաբերել գրադարանի գույքին,

3) գրադարանի տարածքում ենթարկվել Մասնաճյուղի ներքին կարգապահական կանոններին, մյուս օգտվողների և գրադարանի աշխատողների նկատմամբ ցուցաբերել հարգալից վերաբերմունք,

4) պահպանել գրադարանային միավորների օգտագործման ժամկետները և անհրաժեշտության դեպքում երկրացնել նախանշված ժամկետները,

5) գրքային ֆոնդից օգտվելիս ստուգել դրանք և գրքային միավորների վնասված լինելու դեպքում հայտնել գրադարանավարին, հակառակ պարագայում, գրքային միավորի վնասի համար պատասխանատվություն է կրում վերջին օգտվողը,

6) յուրաքանչյուր ուստարվա ավարտին (ոչ ուշ, քան տվյալ տարվա հուլիսի 1-ը) գրադարան վերադարձնել վերցված գրքային միավորները,

7) վերադարձնել գրադարանից վերցված գրքային միավորները ոչ ուշ քան՝

ա) բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ավարտական փաստաթղթեր ստանալը,

բ) Մասնաճյուղում ուսումնառությունն ընդհատելը, ազատվելը կամ հեռացվելը,

բ) աշխատանքային պայմանագիրը լուծարելը,

8) ընթերցասրահում աշխատելիս պահպանել լռություն,

9) տեխնիկական միջոցներից օգտվելիս որոշակի խնդիրների բախվելու դեպքում տեղեկացնել գրադարանի աշխատակիցներին,

10) Պահպանել տեխնիկական միջոցներից օգտվելու կանոնները։

3.4. Գրադարանից օգտվողներին չի թույլատրվում.

1) գրադարանից օգտվել մեկ այլ անձի գրադարանային քարտով կամ մեկ ուրիշին թույլ տալ, որ օգտվի իր գրադարանային քարտից,

2) գրադարանի տարածքից դուրս հանել համապատասխան գրադարանային քարտում չգրանցված գրքերը և միայն ընթերցասրահում օգտվելու համար տրամադրված գրքային միավորները,

3) ներբեռնել կողմնակի համակարգչային ծրագրեր, ջնջել կամ փոխարինել կոշտ սկավառակի տեղեկատվությունը,

4) ընթերցասրահում գրքային միավորներից կամ համակարգչային տեխնիկայից օգտվելիս օգտագործել սնունդ, հյութ, սուրճ,
5) գրադարանի տարածքում տեղադրել գովազդային նյութեր։

3.5. Գրադարանից օգտվողների պատասխանատվությունը.

1) այն օգտվողները, որոնք կխախտեն սույն Կանոնները կամ կվնասեն գրադարանի գրքային հավաքածուները, պարտավոր են վերականգնել դրանք,
2) գրականության կորստի դեպքում օգտվողը պարտավոր է վնասը փոխհատուցել տվյալ հրատարակության այլ օրինակով կամ տվյալ կորցրած գրականության շուկայական արժեքի եռապատիկի չափով՝ գումարը փոխանցել ԵՊՀ ԻՄ հաշվեհամարին և կտրոնը ներկայացնել գրադարանի ղեկավարությանը,
3) գրականությունը հանձնելիս թերությունների հայտնաբերման դեպքում օգտվողը պարտավոր է տալ վնասված գրքի նոր օրինակը կամ վճարել արժեքի եռապատիկը։
4) օգտվողները, ովքեր ժամանակին չեն վերադարձնում գրադարանից վերցված գրքային միավորները, մինչև վերցված գրքերի վերադարձը զրկվում են նոր գիրք վերցնելու իրավունքից,
5) օգտվողը պատասխանատվություն է կրում ստացած գրքային միավորների համար։

4. Եզրափակիչ դրույթներ

4.1. Գրադարանից օգտվողների սպասարկումն իրակացվում է ամենօրյա գրաֆիկով՝ բացի հանգստյան և ոչ աշխատանքային օրերից՝ համաձայն ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցի։

4.2. Կանոնները ուժի մեջ են մտնում ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում քննարկվելուց և հաստատվելուց հետո։

4.3. Կանոններում փոփոխություններն ու լրացումները կատարվում են գիտական խորհրդի որոշմամբ՝ գրադարանային խորհրդի առաջակության դեպքում։

4.4. Կանոնները պարտադիր են գրադարանի ընթերցողների համար։

4.5. Կանոնները խախտելու և գրադարանին վնաս պատճառելու դեպքում օգտվողները պարտավոր են փոխհատուցել՝ ԵՊՀ ԻՄ կանոնադրության, սույն փաստաթղթի և այլ իրավական փաստաթղթերի համաձայն։